

**Գավառի պետական համալսարանի Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի 2013-2014 ուսումնական տարվա
զարգացման հայեցակարգից բխող 2013-2014 ուս. տարվա 2-րդ կիսամյակի
գործողությունների պլան**

<i>հ/հ</i>	<i>Աշխատանքի բովանդակությունը</i>	<i>Կատարման ժամկետը</i>	<i>Նախապատրաստող անձ</i>	<i>Պատասխանատու անձ</i>	<i>Նշումներ կատարման մասին</i>
1	Ուսման առաջադիմության բարձրացման ինտենսիվ ճանապարհով ընթանալու կարգախոսը իրականացնելու նկատառումներով մանրամասն ու բազմակողմնակիորեն ուսումնասիրել, վերլուծել և ամբիոնների ու ֆակուլտետի խորհրդի նիստում քննարկել 2013-2014 ուսումնական տարվա առաջին կիսամյակի արդյունքները: Կարիքն առաջանալու դեպքում ձեռնարկել համարժեք միջոցառումներ:	2014 թ. փետրվար- մարտ	ամբիոններ, դեկանատ	Հ. Ղաջոյան, Հ. Հարությունյան, Լ. Քուրքյան	

2	2014-2015 ուսումնական տարվա ուսանողական համակազմի մասին որոշակի պատկերացում կազմելու և դպրոցների ավարտական դասարանների աշակերտներին մասնագիտական կողմնորոշման առումով օգնելու նկատառումներով կազմակերպել այցելություններ մարզի տարածքում և Գավառ քաղաքում գտնվող դպրոցներ՝ այցելություններում ընդգրկելով ֆակուլտետի առաջատար ուսանողներին և փորձառու դասախոսական անձնակազմին:	2014թ. փետրվար	ամբիոններ, դեկանատ	Հ. Ղաջոյան, Հ. Հարությունյան, Լ. Քուրքյան	
3	Ֆակուլտետի որակի ապահովման կենտրոնի, դեկանատի, ամբիոնների գործունեությունը նպատակաուղղել ուսման որակի աստիճանական բարձրացմանը, ինքնավերլուծության գործընթացը դիտել աշխատանքի որակի բարելավման կարևոր միջոց:	մշտական	Որակի ապահովման կենտրոն	Ղաջոյան Հ. , Գևորգյան Գ.	
4	Դասատվության գործընթացի մշտադիտարկում ուսուցման ժամանակակից մեթոդների և տեխնոլոգիաների օգտագործման տեսանկյունից: Դասալսումների արդյունքների վերլուծություն ամբիոնների և ֆակուլտետի խորհրդի նիստերում:	պարբերաբար	ամբիոնի վարիչներ	Հ. Ղաջոյան, Հ. Հարությունյան, Լ. Քուրքյան	

5	Մասնագիտական պրակտիկաների արդյունավետ անցկացման նպատակով հանրապետության մարզերի և Գավառ քաղաքի տարածքում գտնվող իրավապահ, կրթական և մշակութային հաստատությունների հետ նախկինում կնքած պայմանագրերի վերանայում և նոր պայմանագրերի կնքում:	2014 թ. փետրվար, մարտի առաջին տասնօրյակ	դեկանատ	Գ. Գևորգյան	
6	Ավարտին հասցնել «E learning.GSU» էլեկտրոնային ուսուցման համակարգի ներբեռնման աշխատանքները:	փետրվար	ամբիոններ, դեկանատ	Գ. Գևորգյան	
7	Ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի բարելավման, ուսումնական գործընթացի մեթոդաբանական, փաստաթղթային հիմքերի բարեփոխման, ժամանակավրեպ և «Բարոյապես մաշված» գիտելիքները բացառելու նկատառումներով մշտական կապ պահպանել հանրապետության առաջատար բուհերի համապատասխան մասնագիտական ամբիոնների և ՀՀ ԳԱԱ ինստիտուտների հետ:	մշտապես	ամբիոններ	Հ. Ղաջոյան, Հ. Հարությունյան, Լ. Քուրքչյան	

8	Ուսումնական գործընթացին նպաստող կրթական բարենպաստ, տրամադրող մթնոլորտ ստեղծելու նպատակով 100% առաջադիմություն ունեցող և լավագույն արդյունքներ ձեռք բերած, ակտիվություն ցուցաբերած ուսանողներին բարոյական և նոյթական խրախուսման ներկայացում: Ֆակուլտետի «Լավագույն ուսանող», «Լավագույն կուրս» մրցանակաբաշխությունը նպատակաուղղել վերը նշված խնդիրների իրականացմանը՝ ապահովելով գործընթացի հրապարակայնություն:	հունիս	ամբիոններ, դեկանատ	Հ. Ղաջոյան, Հ. Հարությունյան, Լ. Քուրքյան	
9	Դասերին հաճախելիությունը առավելագույնի, իսկ բացակայությունը նվազագույնի հասցնելու նպատակով տանել մշտական անհատական աշխատանք բացակայություն ունեցող ուսանողների հետ դրանց պատճառների պարզաբանման նպատակով, միաժամանակ խրախուսել բացակայություն չունեցող ուսանողներին:	մշտական	ամբիոններ, դեկանատ	Հ. Ղաջոյան, Հ. Հարությունյան, Լ. Քուրքյան	

10	Ֆակուլտետի ուսանողների միջազգային ծրագրերում ներգրավելու նպատակով տանել բացատրական աշխատանքներ, հատկապես անգլերեն լեզվին տիրապետող ուսանողներին մասնակից դարձնել միջազգային ծրագրեր շահած և ուսանած ուսանողների շնորհանդեսներին:	պարբերաբար	ամբիոններ, դեկանատ	Հ. Ղաջոյան, Հ. Հարությունյան, Լ. Քուրքյան	
11	Ուսանողներին հնարավորինս ներգրավել ֆակուլտետում և համալսարանում գործող Դեկորատիվ դիզայնի, Նկարչական ստուդիայի, Լրագրության և այլ խմբակներում՝ նրանց գեղագիտական ճաշակը բարձրացնելու, դեպի արվեստը ունեցած հակումները զարգացնելու նկատառումներով:	մշտական	ամբիոններ, դեկանատ	Հ. Ղաջոյան, Հ. Հարությունյան, Լ. Քուրքյան	
12	Ապահովել պատշաճ նախապատրաստություն ամփոփիչ ատեստավորման գործընթացին, այս ոլորտում բոլոր հնարավորությունների օգտագործում	մարտ-ապրիլ	ամբիոններ, դեկանատ	Հ. Ղաջոյան, Հ. Հարությունյան, Լ. Քուրքյան	

13	Ամենօրյա քարոզչական աշխատանք մասնագիտական ու գեղարվեստական գրականության նկատմամբ հետաքրքրություն ու սեր արթնացնելու նպատակով: ԳՊՀ, Ազգային գրադարանից, ինչպես նաև Ազգային արխիվից առավելագույնս օգտվելու առումով բացատրական աշխատանք ուսանողների հետ, պրակտիկ օգնության կազմակերպում, այդ նպատակով՝ բոլոր կուրսերում. ա) Մասնագիտական գրականությունից զատ, գեղարվեստական գրականության ընթերցման հանձնարարում: բ) Յուրաքանչյուր ամսվա վերջում գրքի քննարկման կազմակերպում: գ) Միջոցառման կազմակերպում հայ բանաստեղծները «Մեկ բանաստեղծությամբ և մեկ երկով» խորագրով:	մշտական	ամբիոններ, դեկանատ	Հ. Ղաջոյան, Հ. Հարությունյան	
----	--	---------	--------------------	---	--

14	Ուսանողության առօրյան հետաքրքիր դարձնելու նպատակով գրական-գեղարվեստական տարաբնույթ միջոցառումների կազմակերպում, ուսանողության ակտիվ ներգրավում ինչպես միջոցառումների կազմակերպմանը, այնպես էլ որպես հանդիսատես ճաշակ ձևավորելու և էլիտար արվեստի համակիրը դառնալու նկատառումներով. ա) «Նրանց փնտրեք ողջերի մեջ» խորագրով գրական - գեղարվեստական ցերեկույթ նվիրված Արցախում զոհված հայ ազատամարտիկներին: Բ) Ցերեկույթների շարք նվիրված մայրության և գեղեցկության տոնին: գ) «Բրեմենյան երաժիշտներ» - մյուզիքլ դ) Ֆրանկոֆոնիայի շրջանակներում «Հայ երգիչները ֆրանսիական երգարվեստում» և «Ֆրանսիական մշակույթը 17-18-րդ դդ» ե) Ձեռարվեստի և դեկորատիվ դիզայնի ստուդիայի ուսանողների կատարծ աշխատանքների ցուցադրում:	փետրվարից հունիս	Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի պատմության ամբիոն, Բանասահիբական ֆակուլտետ	Հ. Ղաջոյան, Հ. Հարությունայան, Ա. Զարգարյան, Լ. Մնեյան	
----	--	------------------	--	--	--

15	Դիպլոմների հանձնումը շրջանավարտներին հիշարժան և տպավորիչ դարձնելու նպատակով հանդիսությունների կազմակերպում, մասնավորապես պատմաբանների համար հանձնման վայր ընտրել մարզի տարածքում գտնվող պատմական հուշարձաններից որևէ մեկը:	հուլիս	դեկանատ, ամբիոններ, ուսխորհուրդ	Հ. Ղաջոյան, Հ. Հարությունյան, Լ. Քուրքչյան	
----	--	--------	---------------------------------	--	--